ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԳԾԱՆՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-23/21>>

ք. Հրազդան **«21» ապրիլ 2023 թ.**

Հրազդանի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Ս. Միքայելյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **Ա/Ձ Ռուբիկ Հարությունյանին, ի դեմս տնօրեն Ռ.Հարությունյանի,** որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **<<Հրազդան համայնքի ճանապարհների գծանշման աշխատանքներ>>-ի** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմա նված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **365** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն

պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **3 862 460 /երեք միլիոն ութ հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր վաթսուն / ՀՀ դրամ :**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Պայմանագիրը կազմված է **9** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հրազդանի համայնքապետարան	
ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1,	Ա/Հ Ռուբիկ Հարությունյան
վարչական շենք	Կոտայքի մարզ գ. Լեռնանիստ
Հրազդանի ՏԳԲ Հ/Հ 900122001440	ՀՎՀՀ 40532726
ՀՎՀՀ 03027114	Հայէկոնոմբանկ ՓԲԸ Հրազդան մ/ճ
Համայնքի ղեկավար՝	Հ/Հ 163158025573
----------Ա.ՄԻՐԱՅԵԼՅԱՆ	Ռուբիկ Հարությունյան

Հավելված թիվ 1

«21» ապրիլ 2023թ. կնքված

<<ԿՄՀՔ- ԳՀԱՇՁԲ -23/21>> ծածկագրով պայմանագրի

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	34921140	Գծանշման աշխատանքներ	Ճանապարհային գծանշման աշխատանքների իրականացումը պետք է կատարվի գծանշման մեխանիզմի միջոցով՝ Ճանապարհների հոծ գծանշում (15000 գմ), Ճանապարհների ընդհատ գծանշում (12000 գմ) 10սմ սպիտակ գույնի սինթետիկ ճանապարհային ներկով, Հետիոտնային անցումների և կանգառների նշագծում սինթետիկ դեղին գույնի ճանապարհային ներկով 600,0 քմ:Ճանապարհայինգծանշման իրականացման ծառայության մատուցումը, որը պետք է իրականացվի գծանշման մեխանիզմի միջոցով՝, ներառում է՝1) գծանշման ընթացքում անվտանգությունը ապահովելու նպատակով ճանապարհի մասնակի կամ ամբողջական փակում (բուրգերով, ժամանակավոր նշաններով, լուսավորվող զգուշացնող նշաններով և այլն). 2) գծանշելուց առաջ հատուկ մեքենա-սարքավորումների միջոցով ճանապարհի մաքրում,երթևեկության փոփոխությանդեպքում՝ փոփոխվող հին գծանշման մաքրում համապատասխան մեքենասարքավորման միջոցով, նախնական չափագրում (հսկիչ կետերը որոշելուց հետո դրանց միացումը փոշի կավիճի կամ համարժեք այլ նյութերի և պարանի միջոցով կամ այլ մեթոդով). 3)գծանշման իրականացում հատուկ գծանշող մեքենաների կամ մեխանիզմների և ճանապարհային գծանշման համար նախատեսված ներկանյութի միջոցով:Գծանշումը իրականացնելու ընթացքում ներկի	դրամ	3862460	3862460	1	Հրազդան համայնքի վարչական տարածքում	Ըստ ծավալաթերթ-տեխնիկական բնութագրի	Պայմանագրի կնքման օրվան հաջորդող օրից մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը:

գնդիկներ՝ գիշերային տեսանելիության ավելացման նպատակով: Գծանշումը իրականացնելուց հետո ներկի չորացման նպատակով պետք է ապահովվի գծանշված տարածքի ոչ անցանելի լինելը: Գծանշումը պետք է իրականացվի ճանապարհային գծանշման համար նախատեսված ներկանյութերով, ճանապարհային գծանշման համար նախատեսված մեքենասարքավորումներով և համապատասխան քանակությամբ աշխատակազմի միջոցով:Գծանշման ներկանյութին ներկայացվող պահանջները հետևյալն են.Գույնը՝ սպիտակ, դեղին: Պայծառությունը ոչ պակաս 80%, չցնդող նյութերի զանգվածային մաս՝ոչ պակաս 75%, չորացման ժամանակը՝ ոչ ավել 20 րոպե, ջրակլանումը՝ ոչ ավելի 1,5%դիմացկունությունը ջերմաստիճանի փոփոխությունների նկատմամբ -40°C մինչև +60°C (Օրինակ՝ գծանշման համար ներկ Эмаль АК-511«КОЛОР-М» Ф):Պատվածքի ամրությունը քերամաշելիության նկատմամբ՝ոչ պակաս 1կգ/մկմ, մաշակայունությունը քաղաքային տիպի ճանապարհների համար՝ ոչ ավել 60%, խտությունը՝ ոչ պակաս 1,5 գր/սմ^3, վերոնշյալ տեխնիկական բնութագրին համապատասխան վկայագրի առկայություն:Գծանշումները պետք է իրականացվեն ժամանակակից սարքավորումներով:Ծառայությունը պետք է մատուցվի համաձայն ՀՀ կառավարության 10/01/2008թ. "Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոնները, ճանապարհային ցանկապատներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները, ուղղորդ սարքվածքներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները և արհեստական անհարթություններին ներկայացվող պահանջները և դրանց կիրառման կանոնները հաստատելու մասին" N 113-Ն, ՀՀ կառավարության 29/06/2006թ. «Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N1206-Ն և ՀՀ Կառավարության 26/10/2006 թ.-ի 1699-Ն որոշումների, ինչպես նաև ԳՕՍ 52289-2004 և ԳՕՍ 52290-2004 պահանջներին համապատասխան:Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից գրավոր առաջադրանքը ստանալու օրվանից 24 ժամվա ընթացքում՝ այդ առաջադրանքում նշված վայրերում և քանակներով, բացառությամբ այն դեպքերի, երբ եղանակային պայմանները թույլ չեն տալիս իրականացնել գծանշման աշխատանքներ /ջերմաստիճանը պետք է լինի +5°C և բարձր, ճանապարհի մակերեսը պետք է լինի չոր և այլն/:Վճարումը կիրականացվի ըստ փաստացի

			ճանապարհների փակման գործընթացն ապահովում է Կապալառուն՝ իր ուժերով և միջոցների հաշվին:Աշխատանքները կատարվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված նորմերին և պահանջներին համապատասխան:										

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան

ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ Հ/Հ 900122001440

ՀՎՀՀ 03027114

Համայնքի ղեկավար՝

Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Ռուբիկ Հարությունյան

Կոտայքի մարզ գ. Լեռնանիստ

ՀՎՀՀ 40532726

Հայէկոնոմբանկ ՓԲԸ Հրազդան մ/ճ

Հ/Հ 163158025573

Ռուբիկ Հարությունյան

Հավելված N 2
«21» ապրիլ 2023թ. կնքված
<<ԿՄՀՔ- ԳՀԱՇՁԲ -23/21>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	34921140	Գծանշման աշխատանքներ	0	0	0	0	3862460	3862460	3862460	3862460	3862460	3862460	3862460	3862460	3862460

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1,
վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ Հ/Հ 900122001440
ՀՎՀՀ 03027114
Համայնքի ղեկավար՝

---Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Ռուբիկ Հարությունյան
Կոտայքի մարզ գ. Լեռնանիստ
ՀՎՀՀ 40532726
Հայէկոնոմբանկ ՓԲԸ Հրազդան մ/ճ
հ/հ 163158025573

---Ռուբիկ Հարությունյան

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԾԱՆՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ 1

Հ/Հ	Փողոցներ	Չափման միավորը	Ծավալը	Գումար
	Շահումյան փողոց			
1	Հետիոտնային ճանապարհային նշագծում, դեղին գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով	Քառ.մ	**94.3**	150880
		գ/մ	**943**	
	Հարավային թաղամաս			
1	Հետիոտնային ճանապարհային նշագծում, դեղին գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով	Քառ.մ	**156**	249600
		գ/մ	**1560**	
	Կենտրոն թաղամաս			
1	Հետիոտնային ճանապարհային նշագծում, դեղին գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով	Քառ.մ	**314**	502400
		գ/մ	**3140**	
	Մաքրավան թաղամաս			
1	Հետիոտնային ճանապարհային նշագծում, դեղին գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով	Քառ.մ	**9.6**	15360
		գ/մ	**96**	
	Վանատուր			
1	Հետիոտնային ճանապարհային նշագծում, դեղին գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով	Քառ.մ	**262**	419200
		գ/մ	2620	
	Միկրոշրջան թաղամաս			
1	Հետիոտնային ճանապարհային նշագծում, դեղին գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով	Քառ.մ	**525**	840000
		գ/մ	**5250**	

	Սոլակ			
1	Հետիոտնային ճանապարհային նշագծում, դեղին գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով	Քառ.մ	22.4	35840
		գ/մ	224	
	Լեռնանիստ			
1	Հետիոտնային ճանապարհային նշագծում, դեղին գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 40 սմ լայնությամբ	Քառ.մ	28.8	46080
		գ/մ	288	
	Ընդամենը ԾԱՎԱԼԱԹԵՐԹ 1			2259360

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ 2

/Հ	Փողոցներ	Չափման միավորը	Ծավալը	Գումար
	Շահումյան փողոց			
1	Գծանշման հատվածի մաքրում 1380մ երկարությամբ	Քառ.մ	82.5	8250
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 1380մ երկարությամբ	գ/մ	825	132000
	Հարավային թաղամաս			
	Երևանյան փողոց			
1	Գծանշման հատվածի մաքրում 620մ երկարությամբ	Քառ.մ	22.5	2250
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 620մ երկարությամբ	գ/մ	225	36000
	Միքայելյան փողոց			
1	Գծանշման հատվածի մաքրում 405մ երկարությամբ	Քառ.մ	16	1600
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 405մ երկարությամբ	գ/մ	160	25600
	Մյասնիկյան փողոց			
1	Գծանշման հատվածի մաքրում 460 մ երկարությամբ	Քառ.մ	11.5	1150
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 460 մ երկարությամբ	գ/մ	115	18400
	Նոյեմբերյան փողոց			

1	Գծանշման հատվածի մաքրում 405մ երկարությամբ			
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 405մ երկարությամբ	Քառ.մ	17	1700
		գ/մ	170	27200
	Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց			
1	Գծանշման հատվածի մաքրում 930 մ երկարությամբ			
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով , լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 930 մ երկարությամբ	Քառ.մ	103	10300
		գ/մ	1030	164800
	Կենտրոն թաղամաս			
	Օգոստոսի 23 փողոց			
1	Գծանշման հատվածի մաքրում 1020 մ երկարությամբ			
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 1020 մ երկարությամբ	Քառ.մ	36	3600
		գ/մ	360	57600
	Բուլվարային փողոց			
1	Նշագծման հատվածի մաքրում 700 մ երկարությամբ			
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով, լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 700 մ երկարությամբ	Քառ.մ	23	2300
		գ/մ	230	36800
	Սահմանադրության հրապարակ օղակաձև խաչմերուկ			
1	Նշագծման հատվածի մաքրում			
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով, լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով	Քառ.մ	10	1000
		գ/մ	100	16000
	Մարզպետարանի մուտքի կայանատեղի			
1	Նշագծման հատվածի մաքրում			
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով, լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով	Քառ.մ	36	3600
		գ/մ	360	57600
	Միկրոշրջան թաղամաս			
	Զորավար Անդրանիկ փողոց			
1	Նշագծմանհատվածիմաքրում 1700 մ երկարությամբ			
2	Ճանապարհայինշագծում, սպիտակ գույնի ներկով լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 1700 մ երկարությամբ	Քառ.մ	432.5	43250
		գ/մ	4325	692000
	Միկրոշրջան թ-ս 1-ին փողոց			
1	հատվածի մաքրում 377 մ երկարությամբ			
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով, լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 377 մ երկարություն	Քառ.մ	15	1500
		գ/մ	150	24000
	Միկրոշրջան թ-ս 8-րդ փողոց (Խեչոյան)			

1	Նշագծման հատվածի մաքրում 398 մ երկարությամբ	Քառ.մ	14	1400
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով, լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 398 մ երկարությամբ	գ/մ	140	22400
	Միկրոշրջան թ-ս Հիվանդանոցի Պուրակային			
1	Նշագծման հատվածի մաքրում 576 մ երկարությամբ	Քառ.մ	52	5200
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով, լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով, 576 մ երկարությամբ	գ/մ	520	83200
	Միկրոշրջան թ-ս Հիվանդանոցի խաչմերուկ			
1	Նշագծման հատվածի մաքրում	Քառ.մ	21	2100
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով, լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով	գ/մ	210	33600
	Միկրոշրջան թ-ս 3-րդ փողոց			
1	Նշագծման հատվածի մաքրում 650 մ	Քառ.մ	19	1900
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով, լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով 650 մ	գ/մ	190	30400
	Ջրառատ թ-ս			
1	Նշագծման հատվածի մաքրում 1030 մ	Քառ.մ	32	3200
2	Ճանապարհային նշագծում, սպիտակ գույնի ներկով, լուսաանդրադարձող ապակե գնդիկների օգտագործումով 1030 մ	գ/մ	320	51200
	Ընդամենը ԾԱՎԱԼԱԹԵՐԹ 2		0	1603100
	Ընդամենը ԾԱՎԱԼԱԹԵՐԹ 1.2			3862460

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան

ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ Հ/Հ 900122001440

ՀՎՀՀ 03027114

Համայնքի ղեկավար՝

----------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Ռուբիկ Հարությունյան

Կոտայքի մարզ գ. Լեռնանիստ

ՀՎՀՀ 40532726

Հայէկոնոմբանկ ՓԲԸ

Հիմգրան Ա/Ձ

Հ/Հ 1631580255730

Ռուբիկ Հարությունյան